ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ «ՏԽՈՒՐ ԽՈՍՔ»-Ը

Իմ մտապատկերում միշտ թարմ ու անջնջելի կմնա վերջին հանդիպումը Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Երջանկահիշատակ Հայրապետին այցելեցի 1994 թ. օգոստոսի 16-ին Երևանի իր առանձնատանը: Պառկած էր և այլևս ոչ ոքի չէր ընդունում: Սպասավորին շատ խնդրեցի, որ ինձ թույլատրվի մի պահ ներս մտնել և միայն համբուրել Վեհի Աջը:

Ծերունազարդ Հայրապետը համաձայնվել էր...

Աջը համբուրելուց հետո ասացի.

- Վեհափառ Տեր, Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոսին նվիրված հատորն ավարտել եմ, խնդրում եմ Ձեր գիրը տվեք, որպեսզի տպարան ուղարկեմ:

Անսպասելի և հուզիչ էր պատասխանը.

- Ես արդեն մեկնում եմ այս աշխարհից, այլևս ուշ է, ոչինչ անել չեմ կարող: Գրքի համար գրածս Վեհարանում՝ գրասեղանի վրա է: Լույսը հանգցրու և կարող ես գնալ:

Ինչպիսի՛ հզոր հավատք, իմաստություն և խաղաղություն կար նրա դեմքին ու խոսքերում: Ծնկի եկա, խոնարհվեցի և նորից Սուրբ Աջը համբուրելով՝ արտասվելով դուրս եկա:

Երկու օր անց, օգոստոսի 18-ին, առավոտյան ժամը 17.15-ին, վախճանվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետը:

Վերջերս երջանիկ պատահականությամբ Ս. Էջմիածնի դիվանատան արխիվային փաստաթղթերի շարքում գտա Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի «Տխուր խոսք»-ը՝ գրված Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոսի գործունեությանը վերաբերող փաստաթղթերի ժողովածուի համար: Այլևս մասունք դարձած այդ փաստաթուղթը ներկայացնում եմ «Էջմիածին» ամսագրի խմբագրությանը՝ հրապարակման նպատակով:

ՍԱՆԴՐՈ ԲԵՀԲՈՒԴՅԱՆ